տուած հացին, (Խալիլի տան և ս քանի տարի հաց տը-ուած էր) մտաբերեց թէ Խալիլ կը յիշէ իւր անցեալն և Սահրատի տնէն տեսած բարիքներն։ Երկրորդ՝ Սահ-րատ չէր կարող խոյս տալ. վասն զի բազմաթիւ ընտա-նեաց տէր էր, ունէր մեծ ծանրոց և անասնեղէն։ Նորա տունը օրական հարիւրէն աւելի անցորդ հիւր և աղքատ հաց կուտէին, նա կը մտածէր «Իդ աղքատ-ներու օրշնիքը հէլբեադ ընձի լէ կը խասնի։»

Թ. Գալէի բերդի արևելեան հիւսիսային պարսպի (որ խիստ զառիվայր մի ունի) վերայ մի կախաղան պատ-րաստած էր Խալիլ, մահուան դատապարտուած Սահ-րատ այս կախաղանի առջև ծնկաչոք գլուխը մի կողմ խոնարհած՝ տխուր դէմքով երկիւղից դունաթափուած գթութիւն կը խնդրէր Խալիլից, սակայն ի զուր։ Հեռ-եալ առաւօտուն Փեթակճոց թաղեցիք (այժմ աւերակ) տեսան զՍահրատ կախաղանից կախուած կը շարժէր։

Սահրատ կախուելու միջոցին «ախ հա՜ց, ախ հա՜ց, դու զիմ տուն քանդեցիր, ասաց, կըսին դու քան զթուր կտուր էիր, հազար հազար հաց, դու ըսկի պտի չօգնի՞ք ընձի, հէչ չէ հոգուս օգնեցէք»։

Մահմուտ այս պատճառաւ պատերազմ կը բանայ Խալիլի դէմ, քանի փոքր ընդհարումներէ յետոյ Մահ-մուտ կը գրաւէ Գարա-Քիլիսէն. Խալիլ և Խժրք-Դա-ւոյի բարձունքը հաստատուած էր. մեծ կռուէ մի յետոյ Խալիլ անձնատուր կը լինի և շղթայակապ Պայազիտ կը տարուի։ Մահմուտ Ալաշկերտից բերել կուտայ Խա-լիլի կինը. կարձակէ Խալիլ, որ գայ տեսնէ իւր կինը Մահմուտի պալատին մէջ. խորամանկն Խալիլ կզգայ, որ իւր աչքով իւր անպատուութիւնը պիտի տեսնէ, բանտից չը հեռանար։